# ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

# «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ»

ԵՐԵՎԱՆ 2022

# *«ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ»*

***Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի***

***Հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոն***

***Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի համագործակցությամբ***

*Երևան 2022*

Հետազոտությունն ուղղված է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրացված երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա համակարգային խնդիրների վերհանմանը, ամփոփմանն ու այդ խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների ներկայացմանը:

Ուսումնասիրությունների հիմնական առանցքում են եղել Մարդու իրավունքների պաշտպանի «2019 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», «2020 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» և «2021 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումներում ներկայացված ոլորտային խնդիրները, որոնք համակարգային ու շարունակական բնույթ են կրել:

Հետազոտության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել և առանձնացվել են երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի մի քանի խնդիրներ, որոնք կազմում են սույն հետազոտության առարկան: Մասնավորապես, սույն աշխատանքում անդրադարձ է կատարվում հետևյալ հարցերին՝

1. Երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքը, այդ թվում՝ բռնությունը.

2. Երեխայի կրթության իրավունքի սահմանափակումը կրթությունից դուրս մնալու հետևանքով.

3. Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության շարունակական խնդիրներ:

Վերը նշված հարցերը դիտարկվել և վերլուծության են ենթարկվել ինչպես տարեկան հաղորդումներում նախանշված խնդիրների շրջանակներում, այնպես էլ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի համատեքստում:

***1. Երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքը, այդ թվում՝ բռնությունը.***

Մարդու իրավունքների պաշտպանի «2019 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», «2020 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» և «2021 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումների [1] ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարիներ շարունակ որպես համակարգային խնդիր է ներկայացվում երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքը, այդ թվում՝ բռնությունը. Երեխայի նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ տեղեկություններ են վեր հանվել Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ինչպես իրենց հասցեագրված բողոքների, այնպես էլ տեղեկատվության հրապարակային աղբյուրների ուսումնասիրությունների արդյունքում:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրված դեպքերով երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքը արտացոլված է ինչպես երեխայի նկատմամբ ուսումնական հաստատությունում ցուցաբերված վատ վերաբերմունքի՝ ուսումնական հաստատության անձնակազմի կողմից երեխայի նկատմամբ կամ երեխաների միջև, այնպես էլ վերջինիս նկատմամբ ընտանիքում բռնության համատեքստում:

Երեխայի նկատմամբ բռնության և նրա նկատմամբ վատ վերաբերմունքի արգելքը ամրագրված է և՛ միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում, և՛ ներպետական օրենսդրությամբ: Այսպես, ՄԱԿ-ի 2015 թվականի սեպտեմբերի պատմական գագաթնաժողովի ժամանակ աշխարհի երկրների առաջնորդների կողմից ընդունված Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման 2030 օրակարգում ներառված 17 նպատակներից 16-րդն է արդար, խաղաղ և ներառական հասարակությունների կառուցման խթանումը: Իր հերթին նույն նպատակի 16.1-րդ թիրախով նշվում է, որ անհրաժեշտ է զգալիորեն նվազեցնել բռնության բոլոր ձևերը և դրանց առնչվող մահերի ցուցանիշը, ավելին 16.2-րդ թիրախն է երեխաների չարաշահմանը, շահագործմանը,

[1] Այսուհետ՝ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներ

թրաֆիքինգին, նրանց դեմ գործադրվող բոլոր տեսակի բռնություններին և խոշտանգումներին վերջ դնելը: Այս եղանակով միջազգային հանրությունը ստանձնել է երեխաների նկատմամբ բռնության բոլոր տեսակների վերացման ուղղությամբ ակտիվ գործողությունների ձեռնարկման առաքելությունը:

Հարկ է նշել, որ երեխաների նկատմամբ բռնությունը լայնամասշտաբ տարածում ունի, ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տվյալների՝ ամբողջ աշխարհում 2-4 տարեկան 4 երեխաներից 3-ը ենթարկվում են բռնության ծնողի կամ մանկավարժի կողմից[2]: Բռնության տարածման մասին են վկայում նաև ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի 2021 թվականի զեկույցում արտահայտած դիրքորոշումները. զեկույցում, անդրադառնալով Կայուն զարգացման 16.2-րդ թիրախին, նշվում է, որ նույնիսկ մինչև պանդեմիան երեխաների նկատմամբ բռնությունը, լայն տարածում է ունեցել, ազդեցություն ունենալով բռնության ենթարկված անձանց վրա՝ անկախ վերջիններիս սոցիալական կարգավիճակից կամ բարեկեցությունից[3]:

Բացի այդ, կարևոր է նաև ընդգծել, որ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների 4.ա թիրախով նախատեսվում է կառուցել և վերազինել ուսումնական հաստատությունների շենքային հարմարությունները, որոնցում հաշվի են առնված երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց և գենդերային տարբերությունների առանձնահատկությունները, և որոնք ապահովում են անվտանգ, բռնությունից զերծ, ներառական և արդյունավետ ուսումնառության միջավայր բոլորի համար:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 19-րդ հոդվածով սահմանվում է երեխայի՝ ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից պաշտպանված լինելու իրավունքը: Կոնվենցիայի 28-րդ հոդվածով հստակ ամրագրված է, որ դպրոցական կարգապահությունն իրականացվում է երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով:

---

[2] Հասանելի է https://www.unicef.de/informieren/aktuelles/gewalt-gegen-kinder-beenden հղումով:
[3] Հասանելի է https://unstats.un.org/sdgs/files/report/2021/secretary-general-sdg-report-2021--EN.pdf հղումով:

*Վերոշարադրյալը իր հերթին արտացոլում է ուսումնական հաստատություններում երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի, այդ թվում՝ բռնության բացառմանն ուղղված աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը: Այս առումով, կարևոր է այն հանգամանքի ընդգծումը, որ որոշ խումբ երեխաներ իրենց խոցելիությամբ պայմանավորված առավել հաճախ են ենթարկվում վատ վերաբերմունքի: Այս մասին է վկայում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի 2016 թվականի զեկույցը, որում նշվում է, որ բուլինգի ենթարկվելու ռիսկը բոլոր երեխաների համար առկա է, սակայն խոցելի իրավիճակներում գտնվող երեխաներն առավել հավանական է որ բուլինգի կենթարկվեն, այդ թվում՝ առցանց եղանակով: Այդպիսի իրավիճակներում գտնվող անձանց շարքին են դասում հաշմանդամություն ունեցող երեխաները, անբարենպաստ կենսապայմաններում ապրող երեխաները, փախստական երեխաները, տեղահանված կամ ապաստան հայցող երեխաները և այլն[4]: Ներկայացվածի համատեքստում առավել քան կարևոր է բուլինգի կանխարգելման նպատակով ևս ուսումնական հաստատությունների ֆիզիկական մատչելիության ապահովումը հաշմանդամություն ունեցող երեխաների համար:*

Պետք է նշել, որ մեջբերված միջազգային իրավական փաստաթղթերը վկայությունն են այն բանի, որ երեխայի նկատմամբ բռնության վերացման հրատապությունը՝ որպես կարևորագույն խնդիր, թիրախավորված է միջազգային հանրության կողմից՝ ակտիվ գործողություններով այդ արատավոր երևույթը արմատախիլ անելու նպատակով:

Այս առումով ներպետական օրենսդրությամբ ևս առկա են իրավակարգավորումներ. այսպես, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք:

Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:

[4] Հասանելի է https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/237/48/PDF/N1623748.pdf?OpenElement հղումով:

Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից»:

Ավելին, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հանրակրթությունը նպատակաուղղված է, ի թիվս այլնի, յուրաքանչյուր սովորողի մարդկային արժանապատվության պահպանմանը:

Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հունվարի 27-ի և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 28-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգը և բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյանի ձևը հաստատելու մասին» N7-Ա/1 և N464Ա/2 համատեղ հրամանով ստեղծվել են հաստատություններում սովորողների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման, բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման համար ընթացակարգեր: Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում որպես առաջարկ է ներկայացվել երեխաների նկատմամբ կամ նրանց կողմից միմյանց նկատմամբ բռնության կասկածելի դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և հաղորդման ընթացակարգեր հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների համար, մինչդեռ նույն տարեկան հաղորդումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ընթացակարգերը ներդրված չեն:

*Ընդհանուր առմամբ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումների ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ լրջագույն խնդիրներից է ուսումնական*

*հասցեագրության կողմից ոչ պատշաճ արձագանքը բռնության դեպքերին, ինչպես նաև իրազեկվածության ցածր աստիճանը: Մասնավորապես, խնդիրն այն է, որ տարեկան հաղորդումներում ներկայացված տեղեկությունների համաձայն՝ երեխաները պատշաճ իրազեկված չեն իրենց՝ բռնությունից պաշտպանված լինելու իրենց իրավունքի վերաբերյալ: Ուստի, հարկ է արձանագրել, որ խիստ կարևոր է միջոցառումների ձեռնարկումը՝ երեխաների՝ իրենց իրավունքների մասին իրազեկվածության բարձրացման, բռնության դեպքերի հաղորդման վերաբերյալ ընթացակարգերի ներդրման ուղղությամբ:*

Պետք է նշել, որ կարևոր է երեխային բռնությունից պաշտպանելու գործում բռնության դրսևորումները վաղ հայտնաբերել և դրանք կանխարգելել, որտեղ մեծ դեր ուսումնական հաստատությունները: Երեխայի կրթության իրավունքի պատշաճ իրացումը երեխայի արժանապատվության հետ համատեղելի միջավայրում պետք է ապահովեն ուսումնական հաստատությունները՝ ելնելով երեխայի լավագույն շահից:

Արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բուլինգի բացառման նպատակով տարատեսակ միջոցառումներ են ձեռնարկվում տարբեր երկրների կողմից: Այսպես, Ամերիկայի միացյալ նահանգների կառավարության կողմից մշակվել է համապարփակ աղբյուր բուլինգի կանխարգելման և դրան արձագանքման համար, այդ թվում՝ հատուկ այդ նպատակով ստեղծվել է կայք, որը երեխաներին ու ծնողներին տրամադրում է տեղեկատվություն առ այն, թե ինչ է բուլինգը և որն է դրա էությունը , թե ովքեր են բուլինգի ենթարկման ռիսկում, ինչպես այն կարելի է այն կանխարգելել և դրան արձագանքել, ինչպես նաև ինչպես, որտեղ և երբ կարելի է հաղորդում ներկայացնել կիբերբուլինգի առկայության դեպքում[5]:

Ֆրանսիայում բուլինգի կանխարգելումը Ազգային կրթության և երիտասարդության նախարարության առաջնահերթություններից է: Աշակերտները մասնակցում են բուլինգի թեմայով դասընթացների և աջակցություն են ստանում այդ հարցերում, ինչպես նաև տեղեկացվում են հասանելի ծառայությունների մասին, իր հերթին ուսումնական հաստատությունների վարչակազմի պարտականությունները այս հարցում հստակեցված են:

[5] Հասանելի է https://www.stopbullying.gov/ հղումով:

Ոլորտում ազգային քաղաքականությունն ու հանրության համար նախատեսված ծրագրերը նախատեսված են նախարարության ինտերնետային կայքէջում[6]:

Մի շարք երկրներ ընտրել են բուլինգի բացառման նպատակով օրենսդրությունը ուսումնական միջավայրի վրա կենտրոնացնելու եղանակը, այդ երկրների շարքին են դասվում Մեքսիկան, Պերուն, Շվեդիան, Ճապոնիան, Ֆիլիպինները և այլն[7]: Օրինակ՝ Մեքսիկայի Երեխաների և դեռահասների իրավունքների պաշտպանության մասին օրենքը պահանջում է իրավասու մարմիններից մշակել ռազմավարություններ բուլինգի վաղ հայտնաբերման, կանխարգելման և բացառման նպատակով, դասընթացներ իրականացնել հանրային ծառայողների ու ուսումնական հաստատությունների անձնակազմերի համար, ինչպես նաև մշակել մեխանիզմներ դպրոցում բռնության սպառնալիքի ենթարկվող երեխաներին աջակցություն, խորհրդատվություն ու պաշտպանություն տրամադրելու նպատակով:

Շվեդիայի Կրթության ակտը ամրագրում է, որ դպրոցները պետք է միջոցներ ձեռնարկեն բուլինգի կանխման նպատակով ու իրականացնեն վատ վերաբերմունքի քննության ու դրա դեմ պատշաճ միջոցառումներ իրականացնելու իրենց պարտականությունները: Դպրոցները պետք է քննեն բոլոր կասկածելի դեպքերն ու հաղորդեն այդ մասին, ինչպես նաև ունենան կանխման ու արձագանքման տարեկան ծրագիր:

Ճապոնիայում Բուլինգի կանխարգելմանն ուղղված միջոցառումների խթանման ակտով դպրոցները պարտավորվում են ապահովել բազմամասնագիտական թիմի (ուսուցիչներ, անձնակազմ, փորձագետներ հոգեբանության, երեխայի բարօրության ու վերաբերելի այլ ոլորտներից) մասնակցությունը գործընթացին, ինչպես նաև երեխաներին ու երիտասարդներին աջակցություն ու խորհրդատվություն տրամադրելուն ուղղված կարողությունների զարգացման միջոցառումների իրականացումը:

[6] Հասանելի է https://www.education.gouv.fr/non-au-harcelement հղումով:

[7] Հասանելի է https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/237/48/PDF/N1623748.pdf?OpenElement հղումով:

Այս առումով, կարևոր է ինչպես իրազեկվածությունը բարձրացնող աշխատանքների իրականացումը գործընթացի բոլոր մասնակիցների համար [8], այնպես էլ հստակ դերաբաշխումը պատասխանատու անձանց միջև:

• **Կարևոր է պարբերաբար, համապարփակ, մատչելի ու հասանելի եղանակով իրազեկվածությունը բարձրացնող միջոցառումներ իրականացնել, այդ թվում՝ առանձին դասընթացների միջոցով, երեխաների, վերջիններիս ծնողների ու ուսումնական հաստատությունների անձնակազմի համար ինչպես երեխաների բռնությունից պաշտպանված լինելու իրավունքի ու պաշտպանության մեխանիզմների, այնպես էլ ուսումնական հաստատության ներկայացուցիչների՝ երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի, այդ թվում՝ բռնության վերացմանն ուղղված աշխատանքներում պարտականությունների վերաբերյալ:**

• **Կարևոր է հրատապ եղանակով ներդնել երեխաների նկատմամբ կամ նրանց կողմից միմյանց նկատմամբ բռնության կասկածելի դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և հաղորդման ընթացակարգեր՝ միևնույն ժամանակ հստակ ամրագրելով ուսումնական հաստատությունում երեխայի նկատմամբ բռնությանն արձագանքման մեխանիզմներն ու ընթացակարգերը, այդ թվում՝ դրանց շրջանակներում ուսումնական հաստատության ներկայացուցիչների գործառույթները:**

• **Կարևոր է «բուլինգ» եզրույթի հասկացության օրենսդրական ամրագրումը, ինչպես երևույթի բացառման նպատակով անձանց իրազեկվածությունը, այնպես էլ կանխարգելման ու պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով. հաշվի առնելով, որ ներկայում ոլորտում նախաձեռնվել են ոլորտի օրենսդրական փոփոխությունների աշխատանքներ, դրական համարելով եզրույթի ամրագրմանն ուղղված աշխատանքները, հարկ է նշել, որ կարևոր է նաև բուլինգի բացառման գործընթացում ուսումնական հաստատությունների դերի ընդգծումը: Մասնավորապես,**

---

[8] Մեքսիկայում ընդդեմ բուլինգի ազգային քարոզարշավը կենտրոնացել է տեղական մակարդակում իրազեկվածությունը՝ ծնողներին աջակցություն տրամադրելով ու ուղղորդելով կիբերբուլինգի առնչությամբ երեխաների վարքագծում փոփոխություններն հայտնաբերելու ու դրանց արձագանքելու հարցում:

«Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է բուլինգի հասկացությունը, որի համաձայն՝ բուլինգ՝ երեխայի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելով մեկ կամ մի քանի անձանց կողմից պարբերաբար դիտավորյալ բացասական (տհաճ կամ վիրավորական) վարքագիծ, որն իրականացվում է բանավոր կամ գրավոր արտահայտության, ֆիզիկական կամ հոգեբանական բռնության գործադրմամբ, ներառյալ՝ կիբերբուլինգը, որն իրականացվում է առցանց միջավայրում՝ էլեկտրոնային սարքավորումների, այդ թվում՝ համակարգիչների, բջջային հեռախոսների և այլ էլեկտրոնային սարքերի օգտագործմամբ. Միևնույն ժամանակ, նույն նախագծի 13-րդ հոդվածով նախատեսվում է, որ պետությունը և նրա համապատասխան մարմինները ձեռնարկում են միջոցառումներ երեխայի նկատմամբ իրականացվող բուլինգի կանխարգելման, դադարեցման, ինչպես նաև բուլինգի ենթարկվող կամ ենթարկված երեխաների պաշտպանության ու վերականգնման համար անհրաժեշտ մեխանիզմներ ստեղծելու ուղղությամբ: Բուլինգի ենթարկված կամ ենթարկվող երեխաների պաշտպանության, նրանց ուղղորդման կարգը, ինչպես նաև բուլինգի ենթարկող երեխաների հետ աշխատանքների իրականացման կարգը և պատասխանատու մարմինը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ներկայացվածից բացի, կարիք կա որպես հիմնարար դրույթ նախատեսելու ուսումնական հաստատությունների կողմից բուլինգի դեպքերին արձագանքելու պարտականությունն ու արձագանքման ինստիտուցիոնալ համակարգի նախատեսման անհրաժեշտությունը:

• Կարևոր է երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի, այդ թվում՝ բռնության թեմայով մասնագիտական կարողությունների զարգացումը, այդ նպատակով վերապատրաստումների ու դասընթացների իրականացումը (ապահովելով նաև մանկավարժի մասնագիտությամբ ուսանող անձանց պարտադիր մասնակցությունը դասընթացներին), մինչդեռ անհրաժեշտ է դրանց ապահովումը ողջ հանրապետության մակարդակով՝ ներգրավելով հանրապետության բոլոր շրջանների ուսումնական

**հաստատությունների ներկայացուցիչներին՝ բազմամասնագիտական կազմով. Այս նպատակով անհրաժեշտ է ՀՀ կառավարությանն երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրերում շարունակաբար ներառել հատուկ միջոցառումներ թեմայի վերաբերյալ մասնագիտական կարողությունները զարգացնելու նպատակով:**

- **Հաշվի առնելով, որ երեխայի իրավունքների պաշտպանության մարմինների շարքում են նաև տեղական ինքնակառավարման մարմինները[9]՝ կարևոր է տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավվածության ապահովումը՝ երեխայի նկատմամբ բռնության բացառման գործընթացում, այդ թվում՝ պարբերաբար հանդիպումների միջոցով տարբեր կողմերի ներգրավմամբ, այդ թվում՝ երեխաների ծնողների հետ իրազեկող ու կանխարգելիչ նպատակներով: Այս առումով ևս կարևոր է տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների կարողությունների զարգացմանն ուղղված շարունակական միջոցառումների իրականացումը ողջ հանրապետության մակարդակով:**
- **Կարևոր է բուլինգի կանխարգելման նպատակով ևս ուսումնական հաստատությունների ֆիզիկական մատչելիության ապահովումը հաշմանդամություն ունեցող երեխաների համար:**

Մեկ այլ լրջագույն խնդիր է ընտանիքում երեխայի նկատմամբ բռնությունը: Այս համատեքստում կարևոր է փաստել, որ երեխաները հաճախ ընտանիքում բռնության են ենթարկվում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ

[9] Խնամակալության և հոգաբարձության մարմինները, այն է՝ համայնքի ղեկավարները, ըստ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի 15-րդ ենթակետի, կատարում են համայնքում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության վիճակի մշտադիտարկում՝ ընդհանուր առմամբ և համայնքում բնակվող այն ընտանիքների հայտնաբերում, որոնցում առկա է երեխայի իրավունքների կամ շահերի խախտման վտանգ և այդ ընտանիքներում ապրող երեխաների իրավիճակի հատուկ մշտադիտարկում՝ տարածքային կենտրոնների, հանրակրթական ուսումնական հաստատությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, ընդ որում մշտադիտարկման ժամկետները և հաճախականությունը սահմանվում են ըստ կարիքի՝ ելնելով իրավիճակից, որի մասին ամեն երեխայի համար ընդունվում է առանձին որոշում, իսկ դրանց արդյունքները, ըստ անհրաժեշտության, կարող են ներկայացվել և քննարկվել երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովում:

վիճակագրական տվյալները, որոնք առավել համապարփակ ներկայացված են 2020 թվականի և 2021 թվականի տարեկան հաղորդումներում ևս մեկ անգամ վկայում են երեխաների՝ ընտանիքում բռնության ենթարկվելու մասին: Ընդ որում ՝ կարևոր է այն արձանագրումը, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2021 թվականի ընթացքում ներկայացված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ դիմում-բողոքների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ ըստ դիմում-բողոք ներկայացրած անձանց պնդումների՝ ստացված 105 դիմում-բողոքներից 28 դիմում-բողոքների դեպքերում են երեխաները ընտանեկան բռնության ենթարկվել երեխաներ (10-ի դեպքում՝ իգական սեռի ներկայացուցիչներ, 8-ի դեպքում՝ արական, 10-ի դեպքում՝ երեխայի սեռի հետ կապված տվյալներ չեն ներկայացվել): Դիմում-բողոքներից 1-ով ընտանեկան բռնության է ենթարկվել առողջական խնդիրներ ունեցող երեխա: Ներկայացված դիմում-բողոքներից 2-ի դեպքում արձանագրվել է ընտանեկան բռնության գործադրում երեխաների ներկայությամբ, այսինքն՝ երեխաները ենթարկվել են անուղղակի բռնության: Մնացած դեպքերում երեխայի ներկայությամբ ընտանեկան բռնության գործադրման մասին տվյալներ չեն արձանագրվել: Մինչդեռ, նշվածը բավարար չէ այն պնդման համար, որ այդ դեպքերում ընտանեկան բռնության գործադրմանը երեխաներ ներկա չեն գտնվել:

**Այս առումով հատուկ պետք է նշել, որ ընտանիքում բռնության վերացմանն ուղղված կարևոր է ինչպես պատասխանատվության մեխանիզմների առկայությունը, այնպես էլ կանխարգելիչ գործառույթների իրականացումը, որը կարող է դրսևորվել ինչպես իրազեկվածությունը բարձրացնող միջոցառումների իրականացման, այնպես էլ դրական ծնողավարության ներդրմամբ [10] : Տարիներ շարունակ ընտանիքում բռնության դեմ պայքարի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում ներկայացվում է միասնական ջանքերի ներդրման ու իրազեկվածության բարձրացման հարցը. այս առումով անհրաժեշտ է ողջ հանրապետության մակարդակով իրազեկվածությունը բարձրացնող ու մասնագիտական կարողությունները զարգացնող միջոցառումներ ձեռնարկել՝ նպաստելով յուրաքանչյուր**

[10] Հասանելի է https://www.unicef.org/media/77866/file/Parenting-Guidance-Note.pdf հղումով:

**մարդու կողմից ընտանիքում բռնության կանխարգելմանն ուղղված գործողությունների ձեռնարկմանը:**

***2. Երեխայի կրթության իրավունքի սահմանափակումը կրթությունից դուրս մնալու հետևանքով.***

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրացված խնդիրներից է երեխայի կրթության իրավունքի սահմանափակման հարցը՝ երեխայի կրթությունից դուրս մնալու հետևանքով: Տարիներ շարունակ որպես խնդիր է ներկայացվում ՀՀ ներպետական օրենսդրությամբ «կրթությունից դուրս մնացած երեխա» եզրույթի հասկացության բացակայությունը, ըստ այդմ՝ նաև չափանիշների բացակայությունը երեխայի կրթությունից դուրս մնացած լինելը գնահատելու համար: Տարեկան հաղորդումներում առանձնահատուկ կարևորությամբ ընդգծվում է նաև հստակ վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման անհրաժեշտությունը:

Կրթության իրավունքը որպես անձի սահմանադրական իրավունք ամրագրված է Սահմանադրության 38-րդ հոդվածով. յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Երեխայի կրթության իրավունքն ամրագրված է նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 28-րդ հոդվածով:

Ըստ տարեկան հաղորդումների՝ երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառները շատ են և տարբեր. ընտանիքի սոցիալապես անապահով երեխա լինելը փաստը և տնային տնտեսությունում երեխային աշխատանքի ներգրավելը, երեխայի՝ հաշմանդամություն ունենալը և այլն:

Ըստ 2021 թվականի տարեկան հաղորդման՝ կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տվյալների պատկերը՝ ըստ մարզերի և սեռի հետևյալն է. Երևան քաղաքում՝ 14 երեխա, որից 3-ը աղջիկ, 9-ը՝ տղա: Արագածոտնի մարզում՝ 13 երեխա, որից՝ 6-ը աղջիկ, 7-ը տղա: Արարատի մարզում՝ 24 երեխա, որից՝ 9-ը աղջիկ, 15-ը՝ տղա: Արմավիրի մարզում՝ 27 երեխա, որից՝ 23-ը աղջիկ, 4-ը՝ տղա: Գեղարքունիքի մարզում՝ 23 երեխա, որից 12-ը աղջիկ: ՀՀ Լոռու մարզում 38 երեխա, որից 20-ը աղջիկ, 18-ը՝ տղա: ՀՀ Կոտայքի մարզում՝ 55 երեխա, որից՝ 21-ը աղջիկ, 34-ը՝ տղա: ՀՀ Շիրակի մարզում՝ 14 երեխա, որից 2-ը՝ աղջիկ: ՀՀ Սյունիքի մարզում՝ 7 երեխա, որից 2-ը աղջիկ, 5-ը՝ տղա: Վայոց Ձորի մարզում՝ 4 աղջիկ, որից 1-ը աղջիկ, 3-ը՝ տղա: Տավուշի մարզում՝ 3 երեխա, որից 2-ը աղջիկ, 1-ը՝ տղա: Երեխաների՝

կրթությունից դուրս մնալու պատճառների թվային պատկերը հետևյալն է. Սոցիալական պայմանների պատճառով՝ 37 երեխա, որից՝ 13 աղջիկ: Ծնողների՝ երեխային դպրոց հաճախել չթույլատրելը՝ 108 երեխա, որից 57-ը՝ աղջիկ: Լսողական առանձնահատկություններ ունենալու հանգամանքը՝ 26 երեխա, որից 17-ը՝ աղջիկ: Տեսողական առանձնահատկություններ ունենալու հանգամանքը՝ 4 երեխա, որից 1-ը աղջիկ, հենաշարժողական առանձնահատկություններ ունենալու հանգամանքը 7 երեխա, որից՝ 5-ը աղջիկ: Մտավոր զարգացման առանձնահատկություններ ունենալու հանգամանքը՝ 33 երեխա, որից 10-ը աղջիկ: Բազմակի հաշմանդամություն ունենալու հանգամանքը՝ 1 տղա երեխա: Երեխաների՝ քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելը՝ 7 տղա երեխա:

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ վիճակագրական կոմիտեի 2022 թվականի զեկույցի համաձայն՝ 2021 թվականին 6 և ավել տարիքային խմբի դպրոց չհաճախելու հիմնական պատճառներից են երեխայի հաշմանդամություն ունենալու հանգամանքը (0.6 ոչ աղքատ բնակչություն, 1.1 տոկոս աղքատ բնակչություն, 1.4 տոկոս ծայրահեղ աղքատ բնակչություն), երեխան ստիպված է աշխատել (2.0 ոչ աղքատ բնակչություն, 2.0 աղքատ բնակչություն 1.2 ծայրահեղ աղքատ բնակչություն), ընտանեկան պատճառներից ելնելով (3.1 ոչ աղքատ բնակչություն, 2.3 աղքատ բնակչություն, 3.7 ծայրահեղ աղքատ բնակչություն), երեխան չի ցանկանում սովորել (7.6 ոչ աղքատ բնակչություն, 12.2 աղքատ բնակչություն, 30.1 ծայրահեղ աղքատ բնակչություն), կրթությունը շատ թանկ է (1.2 ոչ աղքատ բնակչություն, 1.7 աղքատ բնակչություն, 3.6 ծայրահեղ աղքատ բնակչություն) և այլն[11]:

*Ասվածի շրջանակներում կարևոր է նկատել, որ ինչ վերաբերում է 2022 թվականի դրությամբ կրթությունից դուրս մնացած երեխաների թվի վերաբերյալ պարզաբանումներին, ապա պետք է նշել, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տեղեկատվություն չի տրամադրվել:* Ըստ նույն նախարարության՝ նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքի գործարկման ընթացքում ի հայտ են եկել տվյալների անհամապատասխանություն և տեղեկատվության համադրման

[11] Հասանելի է https://armstat.am/file/article/poverty_2022_a_4.pdf հղումով:

հետ կապված խնդիրներ, որոնք լուծելու նպատակով մշակման փուլում է 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագիծ: Շրջանառվելուց և հաստատվելուց հետո ԿՏԱԿ-ի կայքում ծրագրի գործարկման բարելավման նպատակով կկատարվի փոփոխություն: Նախարարության տվյալների համաձայն՝ խնդիրների լուծման նպատակով կատարվում է ցանկերի ճշգրտման գործընթաց տարբեր գերատեսչությունների հետ:

«Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգ Ներկայացվածից բացի պետք է նշել, որ տարեկան հաղորդումներում մտահոգիչ են համարվում պետական մարմիններից ստացված պարզաբանումները երեխաների կրթությունից դուրս մնալու պատճառների վերաբերյալ: Հիմնականում, որպես կրթությունից դուրս մնալու պատճառ նշվում են երեխաների՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու, ամուսնանալու, սոցիալապես անապահով պայմաններ ունենալու, աշխատելու և ծնողների ցանկությամբ դպրոց չհաճախելու հանգամանքները: Մինչդեռ, անընդունելի է որպես պատճառ նշել երեխաների առողջական առանձնահատկությունները, հատուկ կարիքներ կամ հաշմանդամություն ունենալը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթության մեջ չընդգրկվելու պատճառներից կարող է լինել ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի մատչելիությունը, դպրոցներում դասագրքերի, ծրագրերի մատչելիության հարցը, հատուկ կարիքներ ունեցող երեխայի դպրոց տեղափոխման խնդիրը, ինչը անընդունելի է և խաթարում է երեխայի՝ կրթության իրավունքի պատշաճ իրացումը:

Հարկ է նշել, որ կրթությունից դուրս մնալու պատճառներից է նաև բուլինգն ու կիբերբուլինգը: Կրթությունից դուրս մնացած երեխաների խոցելիության աստիճանը բարձրանում է՝ հաշվի առնելով ոչ միայն կրթություն չստանալու հանգամանքը, այլև դրա հետևանքով ուսուցիչների ու դպրոցական համայնքի կողմից խարանի ու պիտակավորման հավանականությունը[12]:

[12] Հասանելի է https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/237/48/PDF/N1623748.pdf?OpenElement հղումով:

Ասվածի շրջանակներում կարևոր է արձանագրել, որ տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից խնդրի բարձրացման արդյունքում, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշմամբ սահմանվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգը: Մինչդեռ, հարկ է նշել, որ ըստ 2021 թվականի տարեկան հաղորդման՝ Երևանի քաղաքապետարանից ստացված տվյալների համաձայն՝ ՀՀ կառավարության նույն որոշմամբ հաստատված՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգով նախատեսված «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգը դեռևս չի գործարկվում:

Խնդրի համատեքստում, հարկ է նշել, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը պարտադիր լիազորության կարգով իրականացնում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում: Նույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսվում է, որ մարզպետը համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ տարածքային մարմինը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում և կարգով աջակցում է երեխայի կրթության (այդ թվում՝ նախադպրոցական կրթության) իրավունքի իրականացմանը, իսկ նույն մասի 8-րդ կետի համաձայն՝ աջակցում է երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծմանը:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները (այսուհետ՝ տարածքային մարմին)՝ սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի ենթակա մարմնի ստորաբաժանումներն են, որոնք իրենց սպասարկման տարածքում բնակչությանը տրամադրում են օրենքով նախատեսված սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ կյանքի

դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությանը կամ նրանց՝ նման իրավիճակում հայտնվելու կանխարգելմանն ուղղված սոցիալական ծառայություններ:

Նույն օրենքի 22.1-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով սահմանվում է, որ Միասնական սոցիալական ծառայությունը ապահովում է տարածքային մարմինների վերը նշված լիազորությունների իրականացումը: Մինչդեռ, օրենսդրական կարգավորումներից պարզ չէ, թե ինչպես է իրականացվում Միասնական սոցիալական ծառայության կողմից տարածքային մարմինների վերը նշված լիազորությունների իրականացման ապահովումը, որն է Միասնական սոցիալական ծառայության դերակատարումը նշված գործընթացում, արդյոք Միասնական սոցիալական ծառայության ենթակա մարմիններ են տարածքային մարմինները, արդյոք «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում նշված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի ենթակա մարմինը Միասնական սոցիալական ծառայությունն է: Ներկայացվածը միանշանակ անդրադառնալ օրենսդրությամբ հստակեցման կարիք ունի:

Ներկայացվածի շրջանակներում հարկ է նաև անդրադառնալ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եվ ուղղորդման կարգը սահմանելու մասին» N 154-Ն որոշման իրավակարգավորումներին: Այսպես, նույն որոշման հավելվածի 2-րդ կետի համաձայն. «Պարտադիր կրթությունից դուրս մնացած են համարվում 6-18 տարեկան՝

1) հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) չհաճախած և (կամ) որևէ ուսումնական հաստատությունում երբևէ չհաշվառված երեխաները.

2) որևէ ուսումնական հաստատությունում հաշվառված, սակայն վեց աշխատանքային օր անընդմեջ կամ ամսվա մեջ ավելի քան 10 օր չհաճախած (չհաճախող) երեխաները.

3) հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական (մասնագիտական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում սովորած և տվյալ ուսումնական հաստատությունից դուրս մնացած մինչև 18 տարեկան երեխաները.

4) ուսումնական հաստատություն հաճախած, սակայն ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի (արտերկիր մեկնելու նպատակով) հետևանքով ուսումն անավարտ թողած երեխաները.

5) այն երեխաները, որոնք հաշվառված են տնային ուսուցման համակարգում, սակայն ՀՀ կրթության տեսչական մարմնի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տնային ուսուցում չի իրականացվում»:

Նույն հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ Հանրակրթական, հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական (մասնագիտական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն չհաճախած կամ որևէ ուսումնական հաստատությունում հաշվառված չլինելու դեպքում պարտադիր կրթությունից դուրս մնացած և տնային ուսուցման համակարգում հաշվառված, բայց ուսուցում չանցնող երեխաներին բացահայտելու համար առնվազն երեք ամիսը մեկ անգամ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԿՏԱԿ), համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները, «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի» մաս կազմող «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգում (այսուհետ՝ էլեկտրոնային ենթահամակարգ) ներկայացնում է 6-18 տարեկան այն երեխաների տվյալները, որոնք որևէ հաստատությունում հաշվառված չեն:

Նույն հավելվածի 4-րդ կետով սահմանվում է. Բացահայտված երեխաների ցուցակները, ինչպես նաև էլեկտրոնային միասնական տեղեկատվական բազան հասանելի են «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգում և ԿՏԱԿ-ի կողմից համակարգ մուտք գործելու համար հաշիվներ են տրամադրվում հետևյալ շահագրգիռ և պատասխանատու կառույցներին՝

1) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններին (այսուհետ՝ բժշկական հաստատություն).

2) խնամակալության և հոգաբարձության մարմնին (այսուհետ՝ ԽՀՄ).

3) հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններին.

4) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

5) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը.

6) ՀՀ կրթության տեսչական մարմնին.

7) ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի համայնքապետարանների) աշխատակազմերի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին (բաժիններ, այսուհետ՝ գործակալություն), իսկ Հայաստանի Հանրապետության «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի մարտի 4-ի N 97-Ն օրենքի դրույթների ամբողջական ուժի մեջ մտնելուց հետո՝ սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի ստորաբաժանումներին (այսուհետ՝ գործակալություն).

8) ՀՀ ոստիկանությանը.

9) նախադպրոցական ուսումնական հաստատություններին.

10) տարածքային կառավարման մարմիններին.

11) ուսումնական հաստատություններին (միայն տվյալ հաստատության սովորողների մասով):

Նույն որոշմամբ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման գործընթացում անհրաժեշտ է բազմամասնագիտական կազմի ներգրավվածությունը: Միևնույն ժամանակ, որոշմամբ երեխայի դպրոց հաճախումն ապահովելու պարտականությունը դրված է մի քանի մարմինների վրա, այն է՝ ըստ որոշման 7-րդ կետի՝ Խնամակալության և հոգաբարձության մարմին (ԽՀՄ) և սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի ստորաբաժանում կամ այլ կերպ ասած՝ տարածքային մարմին, ըստ 17-րդ կետի՝ ԽՀՄ, տարածքային մարմին և ոստիկանություն, ըստ 18-րդ կետի՝ ԽՀՄ և տարածքային մարմին, իսկ ըստ 19-րդ կետի՝ տնային ուսուցումն ապահովելու համար պատասխանատու է ուսումնական հաստատությունը:

Անհրաժեշտ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանին 2022 թվականին ևս հասցեագրվել են բողոքներ երեխայի՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու վերաբերյալ: Այս դեպքերն ու դեպքերի արձագանքման վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ միջգերատեսչական համագործակցության վերաբերյալ, վկայում է այն մասին, որ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման կարգի ընդունմամբ խնդիրը լուծում չի ստացել և շարունակում է առկա լինել: Ավելին, բողոքների քննության արդյունքում իրականացված ուսումնասիրությունները վկայում են այս գործընթացում մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների և պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների ու վերջիններիս ծնողների հետ աշխատանքի ձեռնարկների ու ուղեցույցների մշակման աշխատանքների ձեռնարկման անհրաժեշտության մասին՝ այդ թվում՝ թիրախավորելով նաև միջգերատեսչական համագործակցության հարցերը:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունից բացի, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշմամբ ամրագրված դրույթների ուսումնասիրությունը ևս վկայում է, որ անհրաժեշտ է վերահսկողական մեխանիզմների ներդնում: Մասնավորապես, խնդիրն այն է, որ երեխայի՝ դպրոց հաճախումն ապահովելու, ինչպես նաև տնային ուսուցումն ապահովելու պարտականության կատարման հստակ ժամկետներ սահմանված չեն: Նույն կարգում բացակայում են նաև ողջ գործընթացի նկատմամբ վերահսկողության մեխանիզմները: Ներկայում շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 12-ի N 154-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը[13], մինչդեռ, նշված խնդիրները նախագծում ևս առկա են:

Վերոշարադրյալի համատեքստում պետք է նշել, որ անհրաժեշտ է.

- **կրթության իրավունքի իրացման կարևորության մասին իրազեկվածությունը բարձրացնող միջոցառումներ ձեռնարկել ինչպես երեխաների, այնպես էլ վերջիններիս ծնողների համար.**

[13] Հասանելի է https://www.e-draft.am/projects/5107/about հղումով:

**• միջոցառումներ ձեռնարկել ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշմամբ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման աշխատանքներում ներգրավված մարմինների կարողությունների զարգացման նպատակով՝ թիրախավորելով նաև միջգերատեսչական համագործակցության հարցերը.**

**• ամրագրել վերահսկողական մեխանիզմներ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշմամբ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման աշխատանքներում ներգրավված մարմինների պարտականությունների կատարման նկատմամբ՝ սահմանելով նաև երեխայի՝ դպրոց հաճախումն ապահովելու, ինչպես նաև տնային ուսուցումն ապահովելու պարտականության կատարման առավել հստակ ժամկետներ:**

***3. Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության շարունակական խնդիրներ:***

Մարդու իրավունքների պաշտպանը բարձրաձայնում է տարիներ շարունակ խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության հետ կապված համակարգային բնույթ ունեցող խնդիրները, սակայն այդ խնդիրներն այդպես էլ լուծում չեն ստանում: Պաշտպանի կողմից ներկայացվող խնդիրները բխում են Պաշտպանին հասցեագրված բողոքների բովանադակությունից ու դրանց ուսումնասիրությունների արդյունքներից:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում մշտապես բարձրացվող խնդիրներից է Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների վերապատրաստումների, առավելապես՝ երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ, անհրաժեշտությունը՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ԽՀՀ-ների գործունեության արդյունավետության բարձրացման

և նույն մարմինների կողմից երեխաների լավագույն շահերից բխող գործունեություն ծավալելու, այդ թվում՝ երեխայակենտրոն մոտեցմամբ ուսումնասիրություններ իրականացնելու, եզրակացություններ և որոշումներ կայացնելու երաշխավորման նպատակով:

Խնդրի շրջանակներում տարեկան հաղորդումներում ներկայացվում է, որ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում նման վերապատրաստումներ, որոնք ուղղված կլինեն երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում տվյալ մարմինների կարողությունների զարգացմանը և նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, գրեթե չեն կազմակերպվում և իրականացվում ԽՀՀ-ների անդամների համար: Ըստ տարեկան հաղորդումներում ներկայացված տեղեկությունների՝ կազմակերպվող սահմանափակ թվով վերապատրաստումների ընթացքում հիմնականում քննարկման առարկա չեն դարձվում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող առաջնահերթ կարևորության համակարգային խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարեկան հաղորդումներում ներկայացվող մշտական խնդիր է ԽՀՀ-ների անդամների գործունեության կամավորության սկզբունքի առկայությունն ու ԽՀՀ-ների անդամների գործունեության համար լրացուցիչ վարձատրություն սահմանված չլինելը: Խնդիրը համակարգային բնույթ ունի:

ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշման հավելվածի 11-րդ կետի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով), որը խորհրդակցական մարմին է և գործում է հասարակական հիմունքներով:

Նույն հավելվածի 12-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել երեքից մինչև ինն անձ: Հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ

հոդվածի համաձայն: Հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ սահմանվում է նաև հանձնաժողովի նախագահը, ով իր հերթին, հանձնաժողովի կազմից նշանակում է հանձնաժողովի նախագահի տեղակալ և քարտուղար:

Իսկ 14-րդ կետով սահմանվում է, որ հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, տարածքային կենտրոնների աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ):

**Այսպիսով, բխեցնելով Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում ներկայացված խնդիրներից ու առաջարկներից՝ հարկ է նշել, որ անհրաժեշտ է.**

- **ձեռնարկել միջոցառումներ ԽՀՄ-ների և ԽՀՀ-ների գործունեության ու լիազորությունների վերաբերյալ անձանց իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով՝ շարունակական միջոցառումներ նախատեսելով նաև ՀՀ կառավարության երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրերում.**
- **ձեռնարկել միջոցառումներ ԽՀՄ-ների և ԽՀՀ-ների ներկայացուցիչների կարողությունների զարգացման նպատակով՝ առավելապես թիրախավորելով երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում գիտելիքների ամրապնդումը, շարունակական միջոցառումներ նախատեսելով նաև ՀՀ կառավարության երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրերում: Պետք է նշել, որ ԽՀՀ-ների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է սահմանել ԽՀՀ-ների անդամների կրթական որակավորման շեմի և մասնագիտական կրթության հետ կապված հստակ պահանջներ.**

- **ամրագրել ԽՀՀ-ների անդամների վարքագծի առանձին կանոնների և դրանց խախտման համար պատասխանատվության հստակ միջոցներ և ապահովել գործնականում դրանց կիրառումը.**
- **օրենսդրական փոփոխությունների միջոցով ԽՀՀ-ների անդամների գործունեության կամավորության սկզբունքը բացառել և վերջիններիս համար սահմանել լրացուցիչ վարձատրություն, ինչպես նաև ապահովել բոլոր համայնքների ԽՀՀ-ների կազմում վճարովի հիմունքներով աշխատող բազմամասնագիտական կազմ, այդ թվում՝ հոգեբան, մանկավարժ և սոցիալական աշխատողի պարտադիր ներգրավումը:**